




ԼՐԱՏՈՒ
ՀՈՒԼԻՄ 2013



«Շուկաներ Մեղրիի
համար»



ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուլիս ամսվա ընթացքում «Շուկաներ Մեղրիի համար» ծրագիրը կազմակերպեց երկու կարևոր միջոցառում, որոնք վերաբերում են տարածաշրջանում ֆինանսական շուկաների զարգացմանը: Պատշաճ զարգացած ֆինանսական շուկաներն աճի ու զարգացման հիմքն են՝ հատկապես աղքատ ֆերմերների համար, ովքեր իրենց սակավ ռեսուրսներով սովորաբար ավելի մեծ կախում ունեն ֆինանսական միջոցներից, որոնք նրանց համար կապահովեն ներդրանքների և այլ շուկայական ապրանքների հասանելիությունը: Ֆինանսական շուկայի թերի կատարողականը լուրջ խոչընդոտ է ցանկացած բիզնես գործունեության համար: Այդ իսկ պատճառով ծրագրի թիմը սույն թվականի հուլիսի 9-ից 11-ը կազմակերպեց «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանի» «Ջրից դեպի շուկա» ծրագրի շրջանակներում տրամադրվող երկարաժամկետ և ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման կարգի և պայմանների ներկայացման գործընթացը տարածաշրջանի Կարճևան, Վարդանիձոր, Նոնաձոր, Շվանիձոր, Ալվանք համայնքներում և Մեղրի քաղաքում: Նախաձեռնությանը մասնակցեցին շուրջ 34 ֆերմեր և վարկ տրամադրող հետևյալ հինգ կազմակերպությունները՝ «Ֆարմ կրեդիտ Արմենիա», «Նոր հորիզոն», «Անիվ», «ՄԵՖ ինտերնեյշնլ» և «ԶԱԴ ԱգրոԿրեդիտ»: Որպես արդյունք ֆերմերներից շատերը ցանկություն արտահայտեցին մասնակցելու «Ջրի ներտնտեսային կառավարում» և «Բարձրարժեք գյուղատնտեսություն» թեմաներով դասընթացներին: Մասնակցությունն այս միջոցառումներին և

համապատասխան հավաստագրերի ստացումը հետագայում հնարավորություն կընձեռի ֆերմերներին ստանալու «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանի» «Ջրից դեպի շուկա» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերը: Որպես տրամաբանական շարունակություն M4M ծրագրի թիմը “VISTAA Plus” ընկերության հետ համատեղ հուլիսի 26-28 ձեռնամուխ եղավ վերոնշյալ դասընթացների կազմակերպմանը: Արդյունքում 31 ֆերմեր ձեռք բերեցին հավաստագրեր և այժմ դիմել են համապատասխան կառույցներին՝ վարկ ստանալու նպատակով:

Հուլիսի 5-6 M4M թիմը Մեղրիի տարածաշրջանի մի շարք համայնքներում կազմակերպեց «Պայքարի միջոցառումներ՝ խաղողի և մերձարևադարձային պտղատեսակների հիմնական վնասատուների և հիվանդությունների դեմ» խորագրով սեմինարը, որը վարում էր ոլորտի առաջատար մասնագետ դոկտոր Ալֆրեդ Գրիգորյանը: Երկար տարիների ընթացքում այս տարածաշրջանում ֆերմերների մեծամասնությունը չի ձեռնարկել պատշաճ միջոցառումներ հիմնական հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարում և օգտագործել է միայն ավագ սերնդից ժառանգած գիտելիքներն ու փորձը, ինչը այդքան էլ արդյունավետ չէ: Շուրջ 44 ֆերմեր մասնակցեցին այս սեմինարին: Հաշվի առնելով մասնակիցների հետաքրքրվածությունը և նման միջոցառումների անհրաժեշտությունը՝ M4M թիմը որոշեց շարունակական դարձնել այս նախաձեռնությունը, որպեսզի պայքարի միջոցառումները տարածաշրջանում առավել արդյունավետ լինեն: